

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ԵՐԵՎԱՆԻ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ**

16.03.2023 16:33



Փաստաբանների պալատը հյուրընկալել է Երևանի Գլաձոր համալսարանի և Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի ուսանողներին:

Նրանց հետ զրուցեցին Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավար Լուսինե Սարգսյանը և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանը:

Ուսանողներին ներկայացվեց Փաստաբանների պալատի կառուցվածքը և դերը, փաստաբանական գործունեության առանձնահատկությունները:

Լուսինե Սարգսյանը և Գևորգ Մկրտչյանը պատասխանել են ուսանողներին հուզող հարցերին, որոնք առավելապես վերաբերվում էին փաստաբանի վարքագծին, փաստաբանի աշխատանքին ու արդար դատաքննության իրականացմանը:

Այնուհետև ուսանողները շրջայց կատարեցին Փաստաբանների պալատի վարչական շենքում, եղան Փաստաբանական ակադեմիայում և Հանրային պաշտպանի գրասենյակում:

Անմիջականորեն ծանոթանալով աշխատանքային պայմաններին՝ ուսանողներն իրազեկվեցին նաև Փաստաբանական ակադեմիայի ընդունելության կարգի և կրթական մեթոդների մասին, ինչպես նաև՝ հանրային պաշտպանների գործառույթների, դատական գործերում նրանց կողմից ներկայացուցչություն կամ պաշտպանություն իրականացնելու պայմանների մասին:

Հանդիպման ավարտին ուսանողները շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության և բովանդակային զրուցների համար:





Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })